№ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1898

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10.

Փղոսկր երաժիշտը. (պատկեր)։ *** Պ. Ս.։ *Դավիթ վարմունկ.* Սոֆիա Տէր-Սոեփանեան։ *Ուղիւթի գանգատը* (ոտանաւոր—իտալերէնից). Նիւսէս Զահրամեան։ *Մատնեցի խորհուրդը* (գրոյց). Մարտիրոս Ղահրամանեանց։ *Հոգեւոր խիղճը* (ոտանաւոր). Սիմէօն Սաֆարեանց։ *Հայրենասէր Ռֆիզ Նիհան Տաւրիդում* (Եւրիպիդէ. կրշտուենակւի). Ա. Բաբուեթչեան։ *Երկու թռչուն* (ոտանաւոր). Ջաւադ բէկ Խալուեղեան։ *Եղջերուներն անտառում.* (պատկեր)։ *Թագուհի քոյրը եւ եղջերու-եղբայրը* (հէքիաթ). Եր. Մովսիսեան։ *Մեծ սեւ շունը* (Լուի Դեպրէի արձակ բան-ստեղծագործութիւններից. պատկերով). Յ. Նազարեանց։ *Մէջմէ* (արաբական աւանդավէպ Լուիզ Ռուսօ'ի). Ստոմ Զահէն։ Պատանի ձիաւորը (պատկեր)։

Գիտութիւն եւ արուեստ

Նաւթը (վերջը միւս անգամ). Ջ. Տէր-Գրիգորեան։

Զուարճալիք

Դրաւախաղ (Փանտ). Գ. Խաբուրեանց։ *Հանելուկներ, թւաբանական խնդիրներ։*

Յայտարարութիւններ

Фпfrрhц бrшdрcsр

ԳԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

եւ յաւելած դաստիարակների համար

XVI ՏԱՐԻ № 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1898 Թ.

* * *

Եւ ժամանակի ա-
ւերիչ ձեռքով դէպ-
քեր ու մարդիկ կը-
դան ու կերթան,

սակայն կը մնայ
անջինջ, յաւիտեան,
ուրացող մարդու
լացն յաւերժ ական...

Պ. Մ.





այկը, Երանդը և Գոհարիկը իմ մտերիմ ընկերներն էին։ Հայկը տասն տարեկան էր, Երանդը՝ տասնումէկ, իսկ Գոհարիկը՝ ինը։

Մի անգամ, ձմեռւայ երեկոյեան մօտ հինգ ժամին, նրանք իրանց մի ընկերի—Արմենակի հետ ման էին գալիս։ Խօսելով, կատակներ անելով՝ նրանք բաւական երկար ման եկան։ Վերջապէս, ժամանակ էր տուն վերադառնալու։ Մօտ քսան քայլ էր մնացել տուն հասնելու, յանկարծ Երանդը կանգնեց և մի ինչ որ բան վերցրեց գետնից. երեխաները այդ նկատեցին։

—Ի՞նչ վերցրիր,—հարցրեց Հայկը։

—Դեռ ինքս էլ չգիտեմ, մօտենանք լուսին, —ասաց նա։

Մօտենալով լապտերին՝ երեխաները տեսան,

որ Երւանդի գտածը մի հին ու կեղտոտ փողա-
ման էր՝ կողպէքը կոտրած։

Երբ քնակը բացին, մէջը տեսան մի հինգ
րուբլիանոց թղթադրամ, որ երկար գործածուե-
լուց բոլորովին կեղտոտուել ու մաշուել էր։

—Փո՛ղ,—աղաղակեց Արմենակը։

—Այո՛, փող է,—կրկնեց Երւանդը։

—Բաժանե՛նք,—առաջարկեց Արմենակը՝
հայեացքը դցելով ընկերների վրայ։

—Այս փողը մերը չէ, այդ պատճառով էլ
մենք իրաւունք չունենք օգտուելու սրանից,—
ասաց Երւանդը։

—Յիմարութի՛ւն է. մենք կըգնենք խաղա-
լիկնե՛ր, չաքարեղէ՛ն և ուրիշ շատ բաներ։

—Այդ հեշտ է,—ասաց Երւանդը. բայց...

—Է՛հ. բան չունե՞ս. արի, գնանք լաւ-լաւ
բաներ գնենք։

Այդ միջոցին նրանց մօտով անցնում էր՝
ծծկեր մանուկը գրկած՝ մի աղքատ կին իր մեծ
երեխաների հետ. բոլորն էլ ցնցոտիներ էին հա-
գած. երևում էր, որ շատ թշուառ դրութեան
մէջ էին։

Արդեօք նրանը չէ՞ այս փողը,—անցաւ Եր-
ւանդի մտքով։

Յանկարծ կինը մօտեցաւ երեխաներին, ո-

բոնք զբաղած էին խօսակցութիւնով, հազիւ զսպելով իր հեկեկոցը՝ նա դիմեց նրանց և համեստ ձայնով ասաց.

—Տղե՛րք, եկեղեցուց գալու ժամանակ փող եմ կորցրել, չէ՞ք գտել, արդեօք։

—Չըտաս,—չչնչաց Արմենակը։

Երանդը լռեց։

—Բարի մանուկներ, խղճացէ՛ք, տէ՛ք ինձ այդ փողը. ամուսինս տառապում է երկարատև ու ծանր հիւանդութիւնից. ես նոյնպէս տկար եմ, վերջին կոպէկներս են, մեր վերջին յոյսը... Խղճացէք, խնայեցէք այս փոքրիկներին, փողը տէ՛ք, իմ խելօք մանուկներ։

Երանդը լռիկ վերցրեց քսակը և արտասուքն աչքերին՝ տեղ տալքատ կնոջը։

Կինը և իր երեխաները չատ ուրախացան, բայց Երանդը՝ իր այդ գովելի վարմունքի պատճառով՝ աւելի մեծ ուրախութիւն ղգաց։

Սոֆիա Տէր—Սեփանեան

ԱՂԲԻՒՐԻ ԳԱՆԳԱՏԸ

(Իտալերենից)

Նեյերից.

Ս ամէկ թեղի չափ չուր էի եւ մա-
քուր քարակ կոհակով
Ժայռերից իջնում էի:
Ես հանդարտ եւ ուղիղ առանց
խանգարելու ոչ ոքի՝
Ամբոխով հոսում էի:
Բայց ամէկ անգամ հրապուրիչ
չրովս վայրկենաբար
Օտարի ուշքը գրաւեցի:
Քնքշաբար գրկեց նա եւ խո-
նարհելով դէպի ինձ՝
Ես չրթունքները թրջեցի:
Բայց յետոյ.. բաժանուեցանք.. նա ամպաց
ձեռների յետեւում,
Իսկ ես չալիս եմ անդադրում:

Ներսէս Շահխաթեան

ՄԱՏՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

—

(Զրոյց)

Մարդու ձեռների մատները մի անգամ սաստիկ սովածացան և սկսեցին խորհուրդ անել՝ թէ ի՞նչպէս անեն, որ մի կտոր հաց ճարեն։ Ներանցից ամենափոքրը՝ ճկոյթը ասաց.

—Տղերք, դէ՛հ, ի՞նչ էք նըստել, վեր կացէք գնանք ճաշելու. ախր այսպէս էլ բան կըլինի՛, փորս վեց-վեց է անում. է՛, մնաչէնները, դուք էլ հո տեղներիցդ միտք չունիք չարժւելու։

— Ո՞րտեղից ուտենք, ճկոյթ-եղբայր, յանկարծ հարցրեց՝ ներանցից երկրորդ մատը. դու հէնց ասում ես գնանք, առանց մտածելու, որ ճաշելու համար պէտք է հաց, կերակուր կամ մի որև է բան ունենալ, իսկ մենք ոչինչ չունենք.

ուրեմն ո՞ւր գնանք, ո՞ւմ դիմենք, ո՞վ մեզ հաց կըտայ։

—Աստուած, լսելի եղաւ միջամատի ձայնը. այն Աստուածը, որ բոլոր մարդկանց, կենդանիներին, թռչուններին կերակրում է, մեզ էս կըմտաբերի և մեզ էս բաժին կըհանէ։

—Իսկ եթէ չըմտաբերեց և բաժին չըհանեց, հարցրեց ցուցամատը։

—Այն ժամանակ կըգողանանք, կուտենք, վըրայ բերեց բթամատը. բա էլ ո՞ր օրւայ համար ենք մենք, որ չըկարողանանք մի կտոր հաց ճարել. չէ՞ որ բոլորը մեզ կըծաղրեն։ Դէ՛հ, վեր կացէք, քնած-քնած մի խօսէք և ի գուր տեղը ժամանակ մի կորցրէք. իմ փորս էլ արդէն սովածութիւնից ցաւում է։ Այս քանի օր է, գիտէ՞ք, որ մի պատառ հաց չենք կերել. գնանք, մի արշաւանք գործենք և որտեղից որ է՝ ճաշ ճարենք։

Աստուած լսեց նրանց բոլորին. նրան դիւր չէկան բթամատի խօսքերը և դրա համար էլ նա անիծեց նրան և ասաց. „Դու, որ քո ընկերների մէջ առաջինն եղար, որ ցանկութիւն յայտնեցիր գողութեամբ հաց ճարելու, չես մեծանալ և երկարանալ, այլ անճոռնի, հաստ և բութ կըմնաս։ Իսկ քո ընկեր միջամատը, կ'երկարի բոլորից և ձեզանից բոլորից բարձր կը-

կանգնէ, որովհետև միայն նա հաւատաց և յայտնեց, որ Աստուած կը տայ ձեր կերակուրը։

Այդ օրից սկսած երկարացաւ միջամատը, իսկ բթամատը կարճացաւ բոլորից, հաստացաւ, բթացաւ և դրա համար էլ բութ մատ կոչուեց։

Եւ մինչև այժմ էլ, երեխաներ, եթէ նայէք ձեր ձեռների մատներին, կը տեսնէք, որ բթամատը կուչ է եկած և բոլորովին մի կողմ քաշուած, իսկ միջամատը ընդհակառակն, միշտ հպարտութեամբ է նայում ընկերներին իր բարձրութիւնից, որովհետև նա պարզերես է թէ ընկերների և թէ Աստուծոյ առաջ։

Դուք էլ, մանուկներ, աշխատեցէք բոլորի առաջ պարզերես լինել։

Մարտիրոս Դահրամանեանց

ՀՈԳԻԱՒ ԽԻՂՃԸ



—

(Ժողովրդական)

—

«Գրնա՛», ասաց Գաբրիէլին մի օր Աստուած զայրագին,
«Գրնա՛-բեր ինձ Բեթղէհեմում ապրող Աննա կնոջ հոգին»։—

Եւ հեռացաւ՝ ճախր առնելով հոգեառը տրիւրագէմ,—
Երկրնքիցը վայր իջնելով՝ գրնաց-մտաւ Բեթղէհէմ։
Հէնց ոտք դրրեց նա մահապարտ որբևայրու տան շէմքին՝
Ահա թէ ինչ տրխուր պատկեր բացւեց նորա առաջին.

Մի կիսափուլ խրրճիթի մէջ, լաթերներում փաթաթուած՝
Արտասուում էր խրղճուկ այրին՝ բիւր մտքերով պաշարուած։
Չորս որբերից մէկը հիւանդ՝ տրնքտրնքում էր անկողնում,
Միւսը—ախորժ մրշմրշալով՝ կաթ էր ծրծում մօր զոգում.
Իսկ երկուսը—մերթ զարմացած՝ նայում էին իրանց մօր,
Մերթ ճաշակով կրրծում էին կորկաճաթի չոր կտոր։—
Այս ամենը տեսանելով՝ հոգեառը շարժւեցաւ
Եւ—խնայելով կրնոջ կեանքը՝ դատարկ ձեռքով յետ դարձաւ։
«Ո՞ւր է հոգին», ամպի նըման, որոտաց սուրբ Եհովան։
—Տէր զօրութեանց, ների՛ր ինձ, ես խրնայեցի հէգ կրնկան։
«Խրնայեցի՛ր... արհամարհի՛ր յանդրդնեցար իմ անվէճ
«Հրրամանը... թէ՛ դու էիր հոգին դրրել նորա մէջ...»

—Ո՛չ, Տէր տէրանց, ես խըղճացի նոր թըշուառ որբերին,
Որոնցից մինն մըշմըշալով դեռ ծըծում էր մօրն ըստին.
Ո՞վ պիտ՝ պահէր և խընամէր նորա մատաղ զաւակաց,
Ո՞վ պիտի տար կաթ փոքրիկին և մեծերին պատառ հաց:

Մի հեզնական թեթև ժըպիտ խաղաց տիրոջ երեսին.
«Թըռէ՛ր աշխարհ», քաղցրիկ ձայնով ասաց դողող հրեշտակին,
«Խորասուզուէ՛ր ովկիանոս կոչուած ծովի յատակը,—
«Այնտեղ մի քար դու կըգտնես, վերցո՛ւր՝ տես ի՞նչ կայ տակը»:

Սարսափահար հոգեառը ոյժ տալով իր թևերին՝
Իջաւ աշխարհ և մի ժամում վերադարձաւ վերըստին.
—Տէր իմ, ասաց նա հիացած,—իջայ խորքն ովկիանի
Եւ քո ասած քարի տակը գըտայ մի փոքր կենդանի.
Նա նըստած էր ուրախ, գըւարթ իր խաւարչուտ գընդանում
Եւ ծովային փափուկ խոտը ծամում էր իր բերանում:
«Ապա ուրե՞մն», խօսեց Աստուած, «եթէ ծովի խորքերում,
«Քարի տակին, ես տեսնում եմ այդ բանտարկուած կենդանուն
«Եւ ամենայն օր Հայրաբար կերակրըում ու պահում.
«Եթէ իմ սուր տեսողութիւնից չէ թագնուում այդ սև ճըճուն,—
«Մի՞թէ կարող չեմ խընամել այրի կնոջ որբերին,
«Կամ օրեկան մի-մի պատառ չոր հաց ղընել ձեռքերին...
«Դէհ, փութացի՛ր», շարունակեց վըճռապէս Եհովան,
«Թըռէ՛ր-գընա և կատարի՛ր անջընջելի իմ հրամանս»:—
Եւ հրեշտակը, կայծակի պէս, գընաց-գըտաւ այրի կին,
Մի վայրկենից վերադարձաւ՝ ձեռքում բըռնած մերկ հոգին:

Չին դարերից, ես յիշում եմ, աւանդութիւն կայ մի մութ,
Որ գաղըտիկ շատ փափուկ սիրտ ունէր առաջ և շատ գութ,
Բայց այս դէպքը տեղիք տըւեց ամենազէտ Արարչին,
Փամել նորա սրտի մէջից խըղճմըտանք և գութ վերջին:

Սիմէօն Սափարեանց

ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԻՓԻԳԷՆԻԱՅ

ՏԱՒՐԻԴՈՒՄ

(Եւրիպիդի)



Յետոյ Ագամեմնոն Թագաւորն որսի ժամանակ Անահիտ դիցուհու սիրելի եղնիկը սպանել էր, դրա համար դիցուհին յոյներին Թոյլ չէր տալիս նաւի առագաստը պարզել, մինչև որ Ագամեմնոնը իր դուստր Իֆիգենիային չզոհէր: Երբ վերջապէս Թագաւորը համաձայնեց աղջկան զոհելու և երբ զոհաբերութեան համար ամեն բան պատրաստ էր, դիցուհին Իֆիգենիայի մահը չուզելով՝ նրա փոխարէն մի մի եղնիկ զոհեց, իսկ օրիորդին հանդիսականներից ծածուկ փոխադրեց Տաւրիդ քաղաքը, որտեղ Անահիտի տաճարն էր: Այդ երկրի Թոաս Թագաւորը այն բոլոր օտարականներին, որոնք գալիս էին Տաւրիդ՝ բռնում ու զոհ էր բերում տաճարին: Բայց որովհետև ոչ ոք իր սեփական կամքով չէր գալիս այդ քաղաքը, ուստի և Թագաւորը բռնում էր նրանց, որոնք ծովի ափում նաւաբեկութեան վտանգին էին ենթարկւում:

Երկար ժամանակ Իֆիգենիան այդ տաճարում քրմապետի պաշտօն էր վարում: Նա մի անգամ տարօրինակ երազ տեսաւ:

Նա երազում տեսնում է, որ իբր Թէ ինքը Տաւրիդից հեռացել է և իր Հայրենի Արգոս քաղաքումն է ապրում: Յանկարծ սաստիկ երկրաշարժից Հայրական ապարանքը փուլ է գալիս, այնպէս որ միայն մի սիւն է մնում կանգնած: Սիւնի վրայ նայելու ժամանակ նրա աչքին երևում է շիկահեր մի երիտասարդ և սկսում է նրա հետ խօսել: Իֆիգենիան ըստ իր սովորութեան, ինչպէս մի օտարականի՝ նրան պատրաստում է զոհաբերութեան համար: Ողբալով՝ լանում է ջրով երիտասարդին: Երբ քնից զարթնում է, նա համոզւում է, որ իր եղբայր Օրէստը վախճանուած պիտի լինի, որովհետև տան սիւնը առհասարակ որդու տեղ էր ընդունուած:

Պատահեց, որ նոյն իսկ այդ օրը Օրէստն իր ընկեր Պիլադի հետ նաւով եկաւ Տաւրիդ: Տաւրիդ գալու պատճառը հետևեալն էր: Այն օրւանից յետոյ, երբ Օրէստը, ի վրէժ հօր մահուան սպանել էր հարազատ մօրը, Եումենիդները *) սկսեցին նրան հալածել: Ապոլլոնի հրամանով նա գնաց Աթէնք, դատի ենթարկելով նրան՝ արդարացրին, բայց կրկին Եումենիդները հալածում էին նրան: Ուստի Ապոլլոնը հրամայեց Օրէստին գնալ Տաւրիդ Անահիտ դիցուհու պատկերը Աթէնք բերելու համար, որից յետոյ կարող է ընդ միշտ ազատւել Եումենիդների հալածանքից: Գալով Տաւրիդ, Օրէստը և Պիլադը անցեալ զոհերի արիւնով թաթախուած զոհաբերութեան սեղանը տեսան: Օրէստը երբ կամենում էր վերադառնալ, Պիլադը բռնելով նրան ասաց. ամօթ է մի անգամ սկսած գործից յետ կանգնելը: Նա խորհուրդ տւեց, նաւից հեռու՝ ծովափի մօտ եղած խուռչներից մէկում թագնւել, եթէ պատահմամբ կրսկսեն իրանց որոնել. իսկ գիշերը սիւների միջանցքով նրանք ներս կրմտնեն տաճարը, դիցուհու պատկերը վերցնելով կրփախչեն:

Օրէստը համաձայնւեց և նրանք թագ կացան ծովափի

*) Չար ոգիներ են:

մօտ եղած քարանձաւներից մէկում: Նոյն քարանձաւի մօտ Հովիւները եղներ էին արածացնում: Հովիւներից մէկը տեսնելով Օրէստին և Պիլադին՝ վազեց ընկերների մօտ ու ասաց.

«Նայեցէք թէ ովքեր են այնտեղ նստած, հաւանական է, որ գրանք աստուածներ լինեն». Նա աստուածների տեղ ընդունեց նրանց նրա համար, որ երիտասարդները պարթևահասակ և գեղեցկադէմ էին: Հովիւներից մի քանիսը սկսեցին մինչև անգամ նրանց աղօթել, իսկ մի քանիսը ծաղրելով ասացին.

— Չէ, գրանք նաւաբեկութեան վտանգի ենթարկուած մարդիկ են, որոնք իմանալով այստեղի սովորութիւնը, այն է օտարականների զոհ բերելը, թագ են կացել այնտեղ:

Բոլորը միաձայն վճռեցին, որ երիտասարդներին բռնեն ու տանեն տաճար զիցուհուն զոհելու:

Մինչ այս, մինչ այն՝ Օրէստը կատաղութեամբ դուրս եկաւ խոռոչից և ասաց.

— Պիլադ, մի՞թէ չես տեսնում դժոխքի սատանային, որ ուզում է ինձ կորցնել և նրան, որը դուրս է ժայթքում կրակը և մօրս բռնած կամենում է ինձ վրայ ձգել: Եւ նա սկսեց բառանչել ինչպէս դոմէշ և հաչել որպէս շուն: Հովիւները այդ բանը տեսնելով խիստ վախեցան, բայց բոլորովին նրանցից չըհեռացան, այլ մի կողմը քաշուելով՝ նստեցին: Բայց երբ Օրէստը հօտի վրայ յարձակուեց ինչպէս մի առիւծ և սկսեց եղներին կոտորել, հովիւները սկսեցին հարայ կանչել, փողհարել, որպէս զի քաղաքացիները իմանան, որ իրանք վտանգի մէջ են: Հովիւները մենակ չըհամարձակուեցան երիտասարդների վրայ յարձակուել, որովհետև վերջիններս ուժեղ և քաջասիրտ էին երևում:

Երբ հաւաքուեցան մի քանի մարդ, հովիւները սկսեցին նիզակներով և քարերով Օրէստի և Պիլադի վրայ յարձակուել: Այդ միջոցին Օրէստի ուշքը գլուխը հաւաքեց: Պիլադը զգուշութեամբ նրան պահպանում էր, սրբում էր բերանից փրփուրը և աշխատում էր իր հնգուստով պաշտպանել նրան թշնամիների նետած սլաքներից և քարերից: Երբ վերջապէս

Օրէստը բոլորովին ուշքի եկաւ և իմացաւ թէ ինչ դրութեան մէջ են իրանք, ասաց.

—Պիլադ, մենք պիտի մեռնենք, բայց աւելի լաւ է քաջի պէս մեռնել. հանի՛ր սուրդ և հետևիր ինձ:

Հովիւներից մի քանիսը կուռի ժամանակ փախան, իսկ մի քանիսն էլ հեռուից սկսեցին քարեր արձակել նրանց վրայ, բայց չկարողացան վիրաւորել նրանց: Վերչապէս հովիւներին յաջողուեց քարեր արձակելով Օրէստի և Պիլադի սրերը խլել և նրանց ձեռները ու ոտները կապելով՝ տարան Թոաս թագաւորի մօտ: Թագաւորը հրամայեց նրանց տանել տաճարը, որովհետև Իֆիգենիան նրանց հետ պիտի վարուէր երկրի սովորութեան համաձայն:

Երիտասարդներին տաճար տարան: Պիլադի անունը Իֆիգենիային յայտնի էր, որովհետև Օրէստն էր յայտնել, իսկ Օրէստի անունը ոչ ոք չգիտէր: Իֆիգենիան հրամայեց, որ նրանց կապանքից ազատեն, ասելով, թէ այն բոլոր ընծաները, որոնք նվիրւում են դիցուհուն, ազատ պիտի լինին: Յետոյ իմանալով, որ նրանք եղբայրներ են, հարցրեց.

—Ո՞վ է ձեր հայրը և մայրը. արդեօք քոյր էլ ունէ՞ք: Ա՜ւաղ, նա այսօր իր շնորհալի եղբայրներից պիտի զրկւի:

Օրէստը պատասխանեց.

—Ինչո՞ւ ես մեզ վշտացնում: Այդ նրանց ասա, որոնք պիտի մեռնեն: Մի խնայիր մեզ, մենք արդէն գիտենք, թէ ձեր երկրի սովորութեան համաձայն՝ ինչ է սպառնում մեզ:

—Խնդրեմ, ասէք ո՞րն է ձեզանից Պիլադը:

—Իմ ընկերս է, ասաց Օրէստը:

—Ո՞ր քաղաքից էք: Չարազատ եղբայրներ է՞ք:

—Մենք արիւնակից եղբայրներ չենք, սակայն իրրև ընկերներ, սերտ եղբայրներ ենք իրարու հետ:

—Ձեռ անունն ի՞նչ է:

—Ձեմ կարող ասել: Դուք իշխանութիւն ունէք մարմնիս վրայ և ոչ թէ իմ անուան:

—Ուրեմն չե՞ս ուզում ասել թէ ո՛րտեղացի ես։

Երբ Օրէստն ասաց, թէ ինքն Արգոս քաղաքից է, Իֆիգէնիան սկսեց հարցնել նրան Տրոայի, Հելենէի, Կալքասի, Ոդիսևսի մասին և ապա հարցրեց.

—Արդեօք Թետիսի որդի Աքիլլէսը կենդանի՞ է։

—Նա մեռաւ և նրա հարսանիքն էլ Ավլիդայում չըկայացաւ։

—Դա իսկական հարսանիքն չէր, ինչպէս շատերին յայտնի էր, ասաց Իֆիգէնիան։

—Թո՛ղ տուր հարցնել դու ո՛վ ես, որ այդպէս հետաքրքրքրւում ես Յունաստանով։

—Ես յոյնի աղջիկ եմ և բերած մանուկ Հասակից։ Ագամեմնոնի մասին ի՞նչ գիտես։

—Ոչինչ չըգիտեմ. խնդրեմ, եթէ կարելի է, նրա մասին ոչինչ չըհարցնել։

—Ինչո՞ւ. խնդրում եմ, պատմեցէք ինչ որ նրա մասին գիտէք։

—Նա մեռել է։

—Աստուած ի՛մ, ինչպէս թէ մեռել է։

—Ինչո՞ւ յուզեցիր. մի՞թէ նա քո բարեկամն էր։

—Սարսափելի է այդպիսի մարդու մահը լսելը։

—Նա իր կնոջ ձեռքով սպանուեց։ Սակայն խնդրում եմ նրա մասին այլ ևս ոչինչ չըհարցնել։

—Միայն ասա, նրա կինը կենդանի՞ է։

—Ո՛չ. նա իր Հարազատ որդու ձեռով սպանուեց, որն իր Հօր մահուան համար վրիժառու եղաւ։

—Այդ վարմունքը սարսափելի է, բայց և այնպէս շատ իրաւացի է։

—Իրաւացի է, սակայն աստուածներին հաճոյ չէ։

—Թագաւորից յետոյ որդիք մնացի՞ն։

—Մի հատ աղջիկ, Էլէկտրա անունով։

—Իսկ թագաւորի որդին կենդանի՞։

—Նա առ այժմ կենդանի է, բայց մարդկանցից ամենից անբախտն է:

Երբ Իֆիգենիան լսացաւ, որ Օրէստը դեռ կենդանի է և իր տեսած երազը սուտ էր, նա վճռեց առաջւայ ծրագիրը իրագործել, դրա համար Օրէստին ասաց.

—Լսիր. քեզ մի բան եմ ուզում առաջարկել, որ թէ քեզ և թէ ինձ համար օգտաւէտ է: Եթէ քեզ ազատելու լինեմ մահից, արդեօք կըցանկանա՞ս տանել մի նամակ Արգոս քաղաքը՝ իմ բարեկամներին յանձնելու: Այդ նամակը գերինեըից մէկն է գրել, խղճալով ինձ, հասկանալով, որ ոչ թէ ես եմ իրան սպանողը, այլ տեղական օրէնքը: Բայց մինչև այսօր չէ պատահել այնպիսի մի մարդ, որին յանձնէի նամակս Արգոս տանել: Սակայն դու, ինչպէս երևում է, ազնիւ ծագում ունիս և միևնոյն ժամանակ ճանաչում ես նրանց, որոնց կամենում եմ յայտնել, որ ես այստեղ եմ գտնւում: Տար այս նամակը և քո կեանքը, իբրև վարձատրութիւն, կընդուի. իսկ ընկերդ քո փոխարէն կզոհւի:

Օրէստը պատասխանեց.

—Շատ լաւ ես ասում, բայց ես չեմ ցանկանում, որ ընկերս իմ փոխարէն զոհւի: Մեր այս ճանապարհորդութիւնն իմ պատճառով է տեղի ունեցել և նա ընկերացել է ինձ, որ նեղութիւնների և վտանգի ժամանակ օգնէ ինձ: Ուստի իմ կողմից անարդարութիւն կլինի, որ նա իմ փոխարէն զոհւի, իսկ ես ազատւեմ: Նամակդ ընկերիս յանձնիր. նա կրտանի Արգոս և կըյանձնէ նրան, որին դու ես ցանկանում. հաւատա, որ այսպիսով նպատակիդ կհասնես: Թող զոհէն ինձ, իսկ ընկերիս ազատեն:

—Քո միտքը շատ գեղեցիկ է և ես կըցանկանայի, որ եղբայրս էլ քեզ պէս լինէր: Յանկացածդ կըկատարւի, նամակս կըյանձնեմ ընկերիդ, իսկ դու կըզոհւես:

Օրէստը հարցրեց, թէ ինչ տեսակ մահով պիտի զոհւի:

Նա պատասխանեց, որ զոհերին ինչը չէ զոհում, դրա

Համար կան առանձին քրմեր. նա միայն զոհերին պատրաստում է զոհաբերութեան համար, իսկ զոհերի մարմինը այրում են:

Երբ Օրէստը ցանկութիւն յայտնեց, որ իր հարազատ քրոջ ձեռքով գերեզմանը յարգւած լինի, Իֆիգենիան պատասխանեց.

—Այդ անկարելի է, որովհետև քոյրերիցդ ոչ ոք այստեղ չըկայ: Սակայն դու Արգոս քաղաքից լինելով ես ինքս գերեզմանդ ծաղիկներով կըզարդարեմ և ամիւնիդ վրայ ա՛ուշահոտ իւղ ու մեղր կըթափեմ:

Այս ասելուց յետոյ նա գնաց, որ նամակը բերէ. հրամայեց պահապաններին, որ երիտասարդների վրայ հսկեն, ոտ ու ձեռքը կապելու:

Իֆիգենիան հեռանալուց յետոյ Օրէստը Պիլադին ասաց.

—Ինչպէս ես կարծում, Պիլա՛դ, ո՞վ պիտի լինի այս աղջիկը: Նա Տրոայի, Արգոսի, Կալքասի, Աքիլլէսի և ուրիշների մասին շատ բան գիտէ: Ագամեմնոն թագաւորի մասին խօսելու ժամանակ նա արտասուում էր: Պէտք է որ Արգոս քաղաքից լինի:

—Չեմ կարծում, պատասխանեց Պիլադը—այնտեղ Ագամեմնոն թագաւորի հետ պատահած դէպքի մասին համարեա բոլորը գիտեն: Բայց լսիր, ինձ համար ամօթ է, որ քո մահից յետոյ ես կենդանի մնամ: Պարզիկ վատ կարծիք կունենան իմ վրայ. նրանք այնպէս կըկարծեն, որ ես ստորաբար մատնել եմ քեզ, կամ թէ սպանել, որպէս զի քրոջդ հետ ամուսնանալով, թագաւորութիւնդ ժառանգեմ: Ո՛չ, միասին պիտի մեռնենք և թող իմ մարմինս քո մարմնի հետ միասին կրակի մատնեն:

Օրէստը չըհամաձայնեց:

—Իմ պատիժը ես պիտի քաշեմ, ասաց նա: Ինձ համար շատ ամօթ է, որ իմ փոխարէն մի ուրիշը զոհւի, քանի որ դու միշտ պատրաստ ես եղել ինձ օգնելու: Աւելի լաւ է, որ ես մեռնեմ: Դու բախտաւոր ես, քո օջախն օրհնւած է, իսկ իմը

անիծւած։ Տուն Հասած ժամանակ, խնդրում եմ Հետևեալ պատուէրս կատարել. նախ՝ յուշարձան կրկանգնեցնես իմ շիրմի վրայ և քոյրս Թոզ իր մազերից և արտասուքից զոհ բերէ։ Ասա Նրան, որ Արգոս քաղաքացի մի աղջիկ ինձ զոհեց։ Դու երբէք քրոջս չըԹողնես, միշտ Հաւատարիմ մնա Նրան։ Դէ մնաք բարեաւ, իմ Հաւատարիմ ընկեր և ուղեկից. ես մեռնում եմ, ուրեմն Ապոլլոնի նախագուշակութիւնը չըկատարւեց։

Պիլադը երդւեց, որ շիրմի վրայ յուշարձան կրկանգնացնէ և քրոջը միշտ Հաւատարիմ ամուսին կըմնայ։ Այդ միջոցին Իֆիգենիան տախտակի կտորի վրայ գրած նամակը ձեռին վերադարձաւ։

— Ահա, այն նամակը, որի մասին մի քիչ առաջ յիշեցի, ասաց նա։ Ես դեռ կասկածում եմ ձեզ վրայ. նախ քան նամակս յանձնելը, ցանկալի է, որ եղբօրմով Հաւատացնէք նամակս Արգոս տանելու համար։

Օրէստը Համաձայնւեց, բայց միևնոյն ժամանակ խնդրեց, որ ինքն էս երդւէ իրանցից մէկին մահից ազատելու Համար։

Իֆիգենիան Անահիտի անունով երդւեց, իսկ Պիլադը Զևսի։ Յետոյ Պիլադը Իֆիգենիայից Հարցրեց. ինչ պիտի անեմ, երբ Ճանապարհին վոլորկի Հանդիպեմ, նամակը կորչի, իսկ ես գուցէ մի կերպ ազատւեմ։

Իֆիգենիան վՃռեց, որ նամակը կարդայ, որպէս զի նամակը կորած ժամանակ կարողանայ նրա բովանդակութիւնը պատմել։

— Ո՞ւմ պիտի տամ, Հարցրեց Պիլադը։

— Կրտաս Օրէստին, Ագամեմնոնի որդուն։ Այժմ լսիր, Թէ ինչ է գրած այս տախտակի վրայ։ «Ես Իֆիգենիաս, որ Աւլիդայում զոհւել եմ, կենդանի եմ, Թէև մեռայ իմ ժողովուրդի Համար. ողջոյն եմ ուղարկում»։

— Ո՞րտեղ է Իֆիգենիան, ընդհատեց Օրէստը։ Մի՛Թէ մեռածը կրկին յարութիւն է առել։

—Իֆիգենիան քո առաջ կանգնած է, բայց խնդրեմ չընդմիջել ինձ։

«Ըրթողես, որ օտար աշխարհում մեռնեմ. տար ինձ Արգոս, ազատիր ինձ զոհաբերութեան պաշտօնից. միշտ ստիպւած եմ օտարի անմեղ արիւնը թափել»։

Երբ Օրէստը կրկարցնէ, թէ ինչպէս է պատահել, որ նա կենդանի է մնացել, ասա՛ նրան, թէ երբ քուրմը պատրաստւում էր որով սպանել, Անահիտի կամքով, իմ փոխարէն զոհ-ւեց մի եղնիկ։ Քուրմը այդ բանը չընկատեց և բոլորը կարծում էին, որ ինձ զոհեցին. բայց դիցուհու կամքով ես այստեղ եմ փոխադրւած։

—Ես իմ ուխտս կրկատարեմ, Օրէստ, առ քրոջդ ձեռից նամակը, ասաց Պիլադը։

Քոյր և եղբայր իրար վզով փաթաթւեցան։ Իֆիգենիան միանգամայն զարմացած էր և աշխատում էր նրա գրկից ազատւել, սակայն Օրէստը ասաց.

—Օ՛, քոյր իմ, մի հեռանար ինձանից, ես քո եղբայրն եմ, որ տեսնել անդամ մտքովս չէր անցնում։

Իֆիգենիան դեռ կասկածում էր և որպէսզի քրոջը համոզի բոլորովին, Օրէստը սկսեց պատմել այնպիսի բաներ, որ միայն քոյր և եղբայր կարող են իմանալ։ Նա պատմեց Իֆիգենիայի ձեռքով գործած այն գորգի մասին, որի նկարը ներկայացնում էր Աթէմի և Թիէստի մենամարտութիւնը, մազերի հիւսւածքները, որոնց թողել էր Աւլիդայում ի յիշատակ, և Պելոպսի նիզակի մասին, որ իր սենեակումն էր պահւում։

(Կբարունակի)



ՆՐԿՈՒՆ

ԹՌՉՈՆ

—

Հարուստ մեծատան
ընդունարանում
Երկու թռչուններ
ջոկ-ջոկ վանդակում
Իրանց երգերով զմայլեցնում էին
Յարգոյ մեծատան փայլուն հիւրերին:
Միակերպ էին երկուսի երգն էլ,
Նոյն հրնչիւնները անհասկանալի...
Եւ ոմն մարդքիցը կարող էր անցնել,
Որ մէկի երգը սուգ էր թախծալի:
— Ես չեմ հասկանում — ասաց մի
անգամ,
Ջահիլ թռչունը ծեր հարևանին—
Այդ անվերջ սուգը, գիտե՞ս, բարեկամ,
Վիրաւորանք է տիրոջ հասցէին:
Ի՞նչ է խընայում տէրը մեզանից,
Ջուրըդ անպակաս, կորեկըդ համեղ,
Չեռու ձմեռւան ցըրտիցը ահեղ...
Եւ դարձեալ դու միշտ դրժգոհ ես կեանքից:
—Օ՛, որդեակ, պարզ է, որ չես հասկանար
Իմ դրժոխալին վիշտը անփարատ...
Դու այդ վանդակում ըստրուկ ծընւեցար,
Իսկ ես, որդեակ իմ... ծընւել եմ ազատ...

Զաւադ բէկ Բալուդեան

Եղջերուներ

ԹԱԴՈՒՀԻ ՔՈՅՐԸ ԵՒ ԵՂՋԵՐՈՒ-ԵՂԲԱՅՐԸ

(Հ ե ք ի ա թ)

Տ՛ար, տ՛ար, տար կորցրու աղջիկդ ու տղաղ, հեռացրու աչքիս առաջից: Մինչ ե՛րբ նրանք ինձ բեռն լինին, մինչ երբ ես նրանց հոգս ու ցաւը քաշեմ,—ասում էր խորթ մայրը իր ամուսնուն, որ վիզը ծռած աղաչում էր կնոջն խնայել իր առաջին կնոջից ունեցած զաւակներին և պահպանել նրանց իր որդուց հետ:

—Չէ, չէ, չեմ կարող ես նրանց դարդը քաշել, տար կորցրու: Չես տանի՝ ես իմ զաւակներիս ձեռը բռնած կըհեռանամ այս տանից: Վաղը այս ժամանակ կամ նրանք պիտի լինին այստեղ, կամ մենք:

—Դու՝ քո խիղճդ, ա՛յ կին, ինչ ասեմ: Գոնէ մի քանի հաց թխիր, վաղը տանեմ նրանց դաշտ, բայց թողնեմ, գուցէ աստուածասիրի մէկը պատահի, խղճայ նրանց, առնի իր մօտ ու խնամք տանի:

Խորթ մայրը գիշերով թխեց երկու ագի բաղարջ: Վերցրեց այդ բաղարջները նրա մարդը, փաթաթեց իր վերնազգեստի փեշում և տղայի ու աղջկայ ձեռը բռնելով դեռ լոյսը չբացած՝ ճանապարհ ընկաւ: Ձատ գնացին թէ քիչ՝ Աստուած գիտէ, միայն արևածագին երբ բարձրացան մի բլուր, յոգնեցան և նստան հանգիստ առնելու:

—Հայրի՛կ, սոված եմ, կանչեց տղան։

Հայրը հանեց բաղարջներից մինը՝ կիսեց, կէսը տւեց տղային, կէսը աղջկան։

—Հայրի՛կ, ծարաւ եմ, նորից կանչեց տղան իր բաժինն ուտելուց յետոյ։

Հայրը հանեց երկրորդ բաղարջը և ասաց. «Այս բաղարջը կըգոլորեմ, դուք վազեցէք յետևից, որտեղ կանգ առնի, այնտեղ է աղբիւրը, խմեցէք, և գլորեց բաղարջը։

Քոյր և եղբայր սկսեցին վազել։ Նրանց աչքից անհետանալուն պէս՝ հայրը դագանակը խրեց գետին, իր վերնազգեստը քցեց վրան և ինքը թողեց—հեռացաւ։ Զատ պտտեցին քոյր ու եղբայր, շատ այս կողմ, այն կողմ ընկան, թփերի տակը նայեցին, բայց աղբիւր չըգտան—փոր փոշման յետ դարձան։ Բայց ի՞նչ դառնալ... հօր փոխարէն միայն վերնազգեստը գըտան դագանակի վրայ դցած։

—Հայրի՛կ, հայրիկ ջան, հայրի՛կ, սկսեցին կանչել միաբերան, բայց չըկար մէկը, որ նրանց լսէր, ձայնին պատասխան տար, միայն քամին սուլուցով շարժում էր վերնազգեստի փեշերը և կարծես նրանց ականջին փսփսում—հայրիկդ գնա՜ց, էլ նրան չէ՛ք տեսնիլ։

Սրտը բարձրացաւ և աւելի ու աւելի տագնապեց գետինը։ Չոգը սկսեց նեղել նրանց, իսկ սաստիկ ծարաւը տանջել։ Ձեռ-ձեռի բռնած քոյր ու եղբայր սկսեցին ճանապարհով առաջ գնալ։ Գնացի՛ն, գնացին ճանապարհին պատահեցաւ նրանց մի փոսիկ՝ իշի սմբակի տեղ՝ լի անձրևի ջրով։ Եղբայրը ցանկացաւ խմել, իսկ քոյրն արգելեց նրան։

—Մի՛ խմիր, եղբայր իմ. էշ կըդառնաս։ Էշերը չիմար են և անհասկացող։

Եղբայրը լսեց քրոջ խօսքը և առաջ անցան։ Մի քիչ գնալուց յետ պատահեց նրանց մի ուրիշ փոսիկ՝ գայլի թաթի տեղ՝ հեղեղի ջրով լիքը։ Եղբայրը վրայ պրծաւ խմելու, իսկ քոյրն թևից բռնեց։

—Մի խմիր, գայլ կըդառնաս։ Գայլերն ատելի են ամենին իրանց չարութեան և ագահութեան պատճառով։ Համբերիր, առաջ գնանք, աղբիւր գտնենք։

Հաղիւ անցել էին մի քանի քայլ, տեսան Լիլի մի փոսիկ՝ եղջերուի կճղակի տեղ՝ ուր կար անձրևի ջուր։

—Քոյրիկ, ծարաւ պապակեցայ, պիտի խմեմ, կանչեց եղբայրը։

—Մի խմիր, եղջերու կըդառնաս։

—Ի՜հ, խօ եղջերուներն էլ չիմար չեն, և ոչ էլ ատելի բոլորին։

—Բայց նրանց ոսկանում են անգութ մարդիկ։

—Չէ, ես ծարաւ եմ, ինչ էլ որ լինի՝ պիտի խմեմ և եղբայրը քրոջը չլսելով խմեց եղջերուի կճղակից անձրևի ջուրը ու դարձաւ... մի եղջերու։

Քոյր և Եղջերու-եղբայրը շարունակեցին իրանց ճանապարհը։ Շատ չէին գնացել նրանք, որ տեսան մի բարձր և կանաչ ծառ, որի կոճղի տակից հոսում էր վճիտ ու սառնորակ աղբիւրը և իր շրջակայքը ջրելով՝ կենդանութիւն ու կեանք բաշխում ծաղիկներին ու կանաչներին։

Արևը մայր էր մտել, մութը գետինն առել։ Քոյրը խըմեց սառնորակ աղբիւրից, բարձրացաւ ծառը, իսկ Եղջերու-եղբայրը սկսեց արածել կանաչներն ու եկաւ ծառի տակը պարկեց։

Հետևեալ առաւօտը, երբ լոյսը բացւեց ու արեգակի ոսկեշող ճառագայթները ցոլացին աղբիւրակի մէջ, Եղջերու եղբայրը մնաս բարև ասելով քրոջն ու ծառին, գնաց անտառ արածելու, իսկ քոյրը սկսեց ծառի պտուղներից պոկել ու ուտել և հետն իր պատկերին նայել, որ երևում էր աղբիւրում։

Այդ միջոցին՝ իր թիկնապահներն յետևից ձգած որս էր անում թագաւորի որդին։

Յանկանալով փոքր ինչ ջուր խմել՝ նա ձին քշեց դէպի ծառը և երբ բաժակը ձեռին ուզում էր ջուր վերցնել աղբիւրից՝ աչքովն ընկաւ աղջկայ պատկերը։ Նա չըհասկացաւ թէ

ինչ պատահեց. ինքն իրան կորցրածի պէս ձեռը մեկնեց աղբիւրի միջից պատկերն հանելու, բայց ձեռը ոչինչ չ'ընկաւ և ինքն էլ կխսով չափ թրջեց: Ջրի մէջ շուռ գալիս նա վեր նայեց և ծառի վրայ տեսաւ աղջկան: Թրջւած շորերով սկսեց մագլցել ծառը դէպի վեր, բայց ի զուր՝ չկարողացաւ բարձրանալ: Նրա թիկնապահները մէկ մէկ փորձեցին վեր ելնել, բայց ոչ ոք չկարողացաւ: Այն ժամանակ Թագաւորի որդին հրամայեց իր թիկնապահներին քարշել սրերը և ծառը կտրել: Մերկացրած սրերը ձեռներին յարձակւեցան նրանք ծառի վրայ՝ խփեցին ու խփեցին, թև ու թիկունքի ընկան, բայց հաղիւ հազ մինչ երեկոյ կարողացան ծառի կեղևը կտրատել:

Թագաւորազնը տեսաւ, որ օրերով ոչինչ չի դառնալ, իր թիկնապահներով վերադարձաւ քաղաք:

Երեկոյեան եկաւ Եղջերու-եղբայրը, տեսաւ ծառը վիրաւորւած, իսկ իր քոյրը նրա ճղներին տխուր նստած: Իմացաւ նրա տխրութեան պատճառը, շատ ցաւեց, որ քրոջը չի կարող օգնել ոչ իր արագաքայլ ոտներով և ոչ բազմաճիւղ պոզերով, սկսեց պտտել ծառի շուրջը և լաց լինելով նրա վիրաւորւած կեղևը լիզել: Մինչ ի լոյս նոր կեղև եկաւ, բունը ծածկեց և ծառն առողջացաւ:

Առաւօտեան մի քանի հարիւր հոգով եկաւ Թագաւորի որդին ծառը կտրելու:

Հրամանը տրւեց.—մարդիկ զօտեպնդւած՝ սուր սուր կացիններ ձեռներին, յարձակւեցան ծառի վրայ. թրր՛իկ ու շրր՛իկ, տւի՛ն ու տւին հաստաբուն ծառին: Իրանք արիւն—քրտնքի մէջ կորան, պողպատեայ կացիններին բերան չբմնաց, իրանց՝ ոյժ ու զօրութիւն. գինովցած գինւորի նման ամեն մէկը մի կողմը ընկած՝ հերթով հանգիստ առան ու նորից կացին վերցրին, բայց մինչ երեկոյ հաղիւ ծառի կէսը կտրել կարողացան:

Եկաւ Եղջերու-եղբայրը, տեսաւ ծառի կէսը կտրած՝ մրղկտաց սիրտը, թուլացան ծնկները, չոքեց ծառի առաջ, մինչ

լոյս աղի-արտասուք թափեց ու լիզեց կտրւած տեղը: Կըտրւածքը լցւեց, ծառը հաստացաւ և առաջւանից աւելի պինդ եղաւ:

Երրորդ առաւօտեան Թագաւորի որդին եկաւ վերջնականապէս կտրելու ծառը, բայց երբ տեսաւ բոլորովին առողջ, ահից ու զարմանքից ապուշ կտրւեց: Նա վերադարձաւ քաղաք և ամեն ինչ պատմեց հօրը: Խարկացած Թագաւորը հրամայեց բոլոր քաղաքացւոց՝ տասը տարեկանից մինչ գառամեալ ծերը՝ վերցնել կացին ու սղոց և գնալ ծառը կտրել: Ամբողջ քաղաքը ծառի շուրջը հաւաքւեց: Եռանդով գործը սկսեցին. որը սղոցով էր կտրում, որը կացնով խփում, որը ուրագով տաշում, որն էլ դրով ծակում: Աշխատեցին, աշխատեցին, մինչ մուրճն ընկնելը՝ հազիւ կէս անցան ծառի կտրելը: Գլշերը վրայ հասաւ ու մնացածը միւս օրւան թողնւեց:

Երեկոյեան Եղջերու-եղբայրը քրոջից լսեց, որ այդ օրը ամբողջ քաղաքն է աշխատել ծառի վրայ:

—Ի՜հ, եթէ այդպէս է, ամենևին մի վախենար, իմ քոյրիկ, ասաց նա քրոջը, թէ որ նրանք իրանց բոլոր ուժով մի ‹ր չեն կարողանում կտրել ծառը, այլ և‹ս երբէք չեն տեսնի այս ծառը կտրւած,—այս ասելով սկսեց ծառը լիզել ու լիզել, մինչ նորից սաղացրեց:

Այնուհետև մի քանի օր շարունակ Թագաւորի որդին իր քաղաքացիներով մինչ երեկոյ աշխատում՝ ծառի կտրելը մոտեցնում էր, իսկ Եղջերու-եղբայրը գիշերը լիզելով—առողջացնում:

Թագաւորը տեսաւ, որ զօռով չի կարելի ծառը կտրել հրամայեց քաղաքի մէջ մունետիկ գցել տալ ու կանչել. «Ով որ ծառից աղջիկն իջեցնէ՝ իր ծանրութեամբ ոսկի կըստանայ»:

Ոչ ոք չըվստահացաւ աղջիկը ծառից իջեցնելու համար խօսք տալ Թագաւորին, բացի մի պառաւից, որ յայտնեց թէ ինքը կարող է: Նա գլխին դրեց մի մաղ ընկոյզ, գրպանում պահեց մի կապոց մեխ, ձեռն էլ առաւ մի շարան ուլունք

ու խաղալով, խաղալով եկաւ ծառի տակ նստեց. քարշեց շարանը կտրեց ու նորից սկսեց ուլունքները շարել, բայց մինը շարում էր, տասն Հատ մատների արանքից թափում:

—Մամի ջան, ափսոս չեն ուլունքները, ինչու՞ ես թափթափում, ասաց աղջիկը նկատելով նրա արածը:

—Ի՞նչ անեմ, զաւակս, պառաւել եմ, աչքերիս լոյսը պնացել է, չեմ տեսնում: Ձի կարելի, որ իջնես ծառից ու շարես: Աղջիկն իջաւ ծառից և սկսեց ուլունքները շարել:

—Դու շարիր, աղջիկս, իսկ ես այս ընկոյզները ջարդեմ՝ միասին ուտենք, ասաց պառաւն ու գաղտնի կերպով Հանեց գրպանից մեխերն և ուզեցաւ ամեն մի ընկոյզ կոտորելուս մի մեխ խփել աղջկայ փեշերին, բայց դեռ ոչինչ չարած, աղջիկը վերջացրեց շարելն ու թռաւ բարձրացաւ ծառը: Պառաւը տեսաւ, որ իր փորձն անյաջող է, թողեց հեռացաւ:

Միւս օրը շալակին մի տոպրակ ալիւր, գլխին դրած մի մաղ կաղին, կրծկալի տակին էլ մի կապոց մեխ պահած՝ նա երգելով, պար գալով ծառին մօտեցաւ: Տոպրակը վայր դրաւ, կաղինը շուռ տւեց իր չոլոս կողմն ու սկսեց ալիւրը մաղել. բայց մինը մաղում էր, տասը թափում: Այս նկատեց ծառի վրայից աղջիկն ու ասաց.

—Մամի, ինչու՞ եմ թափթափում, ափսոս չէ՞ ալիւրը:

—Ի՞նչպէս անեմ, գառնուկս, ուժս պակասել է, ձեռնեերս դողդողում են, չեմ կարողանում մաղել, մէկ իջիր ծառից ու մաղիր:

Աղջիկը իջաւ ծառից և սկսեց մաղել: Մինչ նա իր գործին էր՝ պառաւը այնպէս ցոյց տալով, որպէս թէ կաղին է ջարդում, շրջանաձև մեխեց նրա փեշերը: Ալիւրը մաղելուց յետ աղջիկն ուզեց բարձրանալ ծառը, բայց իզուր. քանի փորձեց ոտի կանգնել՝ չկարողացաւ—արդէն բռնուած էր: Պառաւի կոչին եկան պահապանները և տարան աղջկան թագաւորին:

* * *

Թագաւորի որդին ամուսնացաւ աղջկայ հետ: Եղբերու-եղբայրը թողեց ծառը և այնուհետև ամենայն օր ցերեկը գնում էր անտառ արածելու, իսկ գիշերը գալիս իր փեսայի և քրոջ տները տակ պառկում:

Չնարագէտ պառաւը հարստացաւ, շատ հարստացաւ: Ձինեց արքայավայել ապարանքներ, վարձեց բազմաթիւ ծառաներ և ապրում էր որպէս փափկասուն տիկնաց տիկին: Բայց ամեն անգամ երբ մտածում էր, որ Թագաւորի որդին թողած իրան պէս հարուստ տիկնոջ աղջիկը՝ ծառից իջեցրած մի աղքատ աղջկայ հետ պսակուեց, նրա սիրտը նախանձից ճաքում էր: Գիշեր և ցերեկ դադարում չունէր. մտածում էր թէ ինչ հնարքով իր աղջիկը հարսնացնէ Թագաւորին:

Մի օր իր աղջկայ և Թագաւորի հարսի հետ ծովի ափին լողանալիս՝ նա գլորեց, Թագաւորի հարսին ձգեց ծովը և իր աղջկան հագցնելով նրա շորերը, տարաւ յանձնեց Թագաւորի որդուն:

Եղբերու-եղբայրը սովորութիւն ունէր ամեն երեկոյ իր քրոջ և փեսայի տները տակ պառկելիս նախ հոտոտել, ճանաչել նրանց տները, ապա պառկել քնելու: Այս անգամ հոտոտելիս իմացաւ, որ իր քոյրը չէ տեղումն պառկողը, ուստի մի քանի անգամ կրկնեց հոտոտելն և հետն ասաց. «Ահա փեսայիս տներն, ո՛ւր են քրոջս տները. ահա փեսայիս տներն, ո՛ւր են քրոջս տները»:

Այս լսեց պառաւի աղջիկը: Առաւօտեան նա սուտ հիւանդ ձևացաւ և մխաբերան սկսեց կանչել՝ «Հիւանդ եմ, սիրտս եղբօրուի մէս է ուզում»: Ուղարկուեցան որսորդներ և որսացին բազմաթիւ եղջերուներ, բայց նրանցից ոչ մէկի մսին ձեռը չբուեց պառաւի աղջիկը, այլ շարունակ կանչում էր. «Եղբայր-եղջերուի մսից եմ ուզում»: Թագաւորի որդին ամեն կերպ աշխատում էր համոզել նրան, որ յետ կենայ այդ մտքից—իր սիրելի եղբօրն մորթելու դիտաւորութիւնից, բայց երբ տեսաւ, որ անկարելի է նրան հետ կացնել իր խնդրածից, հրամայեց մորթել Եղջերու-

եղբօրը: Գահիճները սկսեցին սրել և պատրաստել դանակները, իսկ Եղջերու-եղբայրը վազեց ծովի ափ և երեք անգամ բարձրաձայն կանչեց.

—Ջուրի՛,
Դանակներն են սրի,
Եղջերու-եղբօրդ մորթում են, արի՛:

Նրա ձայնը լսեց Թագաւորի որդին: Նա զգաց, որ Եղջերու-եղբայրն այդ խօսքերն անմտօրէն չի ասում, և կասկածեց իր կնոջ իսկութեան վրայ: Իսկոյն հրամայեց ձկնորսներին վերցնել ուռկանները և ձգել ծովը: Հաւաքեցան բազմաթիւ ձկնորսներ ուռկանները ձեռներին: Մի քանի անգամ ձգելուց յետ նրանք դուրս բերին ծովից մի ահագին կէտ ձուկ, որ ջրից դուրս գալուն պէս սկսեց ուռչել և յանկարծ բերանից դուրս ձգեց Թագաւորի Հարսին՝ Թևին գրկած մի գեղեցիկ գանգրահեր մանուկ: Եղջերու-եղբայրը տեսնելով իր քրոջն ու նորածին մանկան, անչափ ուրախութիւնից սկսեց վեր վեր Թռչել. այդ միջոցին պատառւեց նրա մաշկը, դուրս եկաւ եղջերուի կերպարանքից և ներկայացաւ որպէս մի աննման պատանի:

Խարդախութիւնը բացւեց:

Թագաւորն հրամայեց պառաւին և իր աղջկան կապել իրար հետ. երկուսի վզից մի մեծ քար կախել և քցել ծովն այնտեղից, որտեղից նրանք դցել էին Թագաւորի Հարսին:

Եր. Մովսիսեան

Մեծ սեւ շունը

(Լուի Դեպրէի առձակ բանաստեղծութիւններից)

ուլոնում, նաւահանգստից ոչ հեռու, թափառում է մեծ սեւ շունը:

Ինձ ասացին, որ նրա տէրը մի ինչ-որ նորէգիացի բարոն է: Այս մարդը բարեկամուհին չի իմանում և ատում է նրան. նա յետ գնաց, թողնելով Բուլոնում իր մեծ սեւ շանը: Այդ օրից անցել է ամբողջ երկու տարի:

Եւ ամբողջ երկու տարի սեւ շունը միշտ մտածում է, չի դադարում յուսալուց և սպասելուց: Նա, այդ համբերատար և վշտացած շունը, միշտ սպասում և լարած նայում է հեռաւոր ծովին:

Թէև նա ցեխով է ծածկւած, բայց գեղեցկադէմ անգլուհիները նրան հանդիպելիս յաճախ իրանց սպիտակ ձեռներով շոյում են նրան:

* * *

Այս շիկահեր գեղեցկուհիները նրան աշխատում են մոռացնել, հիւսիսի սառնասիրտ զաւակի գործած վատութիւնը փոխարինել: Նրանք շոյում են նրան և ասում. «խեղճ, լքեալ կենդանի»: Բրդի սառնութիւնը, կուճ եկած ականջները, կախ ընկած պոչը, աչքերում երևացող խոր թախիծը,—այս բոլորը վկայում են նրա բարոյական նեղութիւնների անելանելիութիւնը:

Ոչ հեղեղային անձրևները, ոչ անտանելի շոգերը չեն կարող հեռացնել նրան նաւահանգստից։

Եւ հէնց որ, նոյն իսկ ծովային դիտակներին հազիւ նըկատուող, մթնագոյն շերտը երևում է Հորիզոնի հեռաւոր ծայրում, դողն անցնում է նրա բոլոր անդամներով։ Երեք ոստումով շունը հասնում է փարոսի մօտ, անցնում է ամբո-

խի միջով, կանգնելով յետի ոտների վրայ և յենելով առջի ոտներով վանդակներն՝ մի խղճալի, երկարաձիգ ոռնոց է արձակում, որ քամին տանում է ծովի անսահման տարածութեան վրայ։ Այս ոռնոցի ամեն մէկ սրտաճմլիկ նոտան Համոզում է, որ նա ապրում է միայն նրա համար, որպէս զի միանգամ ևս տեսնի Նորւեգիայից եկող իր մոռացկոտ տիրոջը։

* * *

Եւ մօտեցող պոստային շոգենաւի նշանները միայն ընդունակ են զարթեցնել նրա մէջ այս սարսափելի ուժգնութիւնը։ Ֆե-

ղեցիկ, ծածանուող առագաստները չեն ներգործում նրա վրայ։ Սև ծուխը միայն նրա մէջ յոյս է զարթեցնում։

Ահա շոգենաւը մօտենում է ափին և հանգիստ ու հանդարտ մտնում է նաւահանգիստ։ Անհամբերութիւնից խելագարւած շունը վազում է ծովափը մաքսատան պահապաններից առաջ, ոստիկանութիւնից առաջ։ Նա դողում է։

Նա ամենից շուտ նշմարում է կայմի գագաթում երեք գնդերը. նա կարողացաւ ճանաչել տախտակամածի վրայ նեղուող Հարիւրաւոր բոլոր ճանապարհորդներին։

Չէ, այս շոգենաւը Նորւեգիայի ափերից չի եկել, չէ...

Սակայն ինչ. նորւեգացի բարեկամութիւն չըհասկացող բարոնները այս տարի լողարաններ են դնում։

Քանի դեռ օր է, սև շունը հանգիստ է, բայց հէնց որ վրայ է հասնում հորիզոնը ծածկող գիշերը, որի վրայ ցերեկով կարելի է տեսնել ծածանող ծխի սև շերտը, խեղճ կենդանուն տիրում է սարսափելի թախիծը։ Չան կրծքից դուրս են գալիս հեծկլտանք ու հառաչանքներ։

Եւ եթէ երբեմն նրան հանդիպելիս դուք շոյէք նրան, նա կըբարձրացնի ձեզ վրայ իր բարի, թախծալից աչքերը և առաջ կ'երթայ։

* * *

Մի անգամ մի ինչ որ մարկիզուհի փորձեց նրան Սպանիա տանել և այժմ առաջին անգամն էր, որ նրա թախիծի մէջ երևաց բարկութիւն։

Եթէ երեկոյեան դէմ մէկը ցոյց է տալիս, թէ ուզում է արգելել նրա ճանապարհը, նա գլուխը ցած թողած՝ աջ ու ձախ փնտռում է ազատ ճանապարհ, որպէս զի գնայ իր սովորական տեղը։

«Արդեօք ո՞րտեղ է նա անցկացնում գիշերները»—մտածեցի ես երեկ, և յանկարծ խղճալի ուռնոցը ընդհատեց իմ մտածութիւնները։

Դէպի ծովը նայող իմ պատուհանից ես նկատեցի ամե-

Նաբարձր ժայռի վրայ վրայ մեծ սև շանը: Սրտաճմլիկ աղաղակներով նա յայտնում էր աստղերին իր անսահման վիշտը:

* * *

Ես չըգիտեմ այս ազնիւ կենդանու անունը. ես դիտեմ միայն այն, որ ոչ մի մարդ չէր կարող տանել երեք անգամ ամենօրեայ խաբւած յոյսերը եօթ հարիւր օրւայ ընթացքում:

Այս շան հաստատակամութիւնը յիշեցնում է ինձ բազմաթիւ երդմնազանցութիւնները, այն, որ ես երբէք այդպէս չերմ չեմ սիրել և երբէք այդպէս չարաչար չեմ տանջւել:

Գուցէ ես այս տխուր պատմութիւնը չափազանց երկար եմ պատմում, որը կարելի էր անհամեմատ և կարճ կերպով մի քանի տողի մէջ յայտնել, բայց այդ միայն այն պատճառով է, որ ես ուզում եմ ինքս ինձ պարզել նրա բարոյական հիմքը:

Ես չեմ պատկանում գրական այն դպրոցին, որ սովորեցնում է, թէ գրողը չըպէտք պարզ արտայայտի, առաջարկելով ընթերցողին ազատ դաշտ իր սեփական դատողութեանց համար:

* * *

Ես միայն ընթերցողի համար չեմ գրում. ես գրում եմ նոյնպէս և նրա համար, որպէսզի հետևեմ ժամանակի գործողութեան և հոգու վրայ թողած սարսափներին:

Ես, օրինակի համար, այս շան առթիւ ձեզ բոլորովին չեմ ուզում ասել.

«Այս երկու տարւայ ընթացքում շատերը, գուցէ, կրկնում էին նորւեզացի բարոնին. «Ես քեզ սիրում եմ», մինչդեռ հոգւով ատում էին նրան:

«Երկու տարւայ ընթացքում Նորւեգիայում և ամեն տեղ միլիօնաւոր որբացած գաւակներ և սիրահարներ թողին և մոռացան թանգագին մեռեալների գերեզմանները»:

Ես այս պատմութիւնը պատմեցի ոչ թէ նրա համար, որ ներդիծաբանութիւն գրած լինեմ «մոռացութեան» համար:

Մոռացութիւնն ևս ունի իր աստւածային կողմը. մո-

ռացութեան մէջն է—բարութեան արմատը, մոռացութիւնը—դէմասրտութեան եղբայրն է. արդեօք մոռացութիւնը չէ՞, որ պահում է մեր մէջ բուն կեանքի հնարաւորութիւնը և մեր սրտում սիրոյ առաջանալը:

* *
*

Ես ինձ հարցնում եմ.

Ո՞րն է աւելի լաւ. յաւիտեանս մի բանի սպասել, թէ ոչնչի չըսպասել:

Մարդկային փորձը, ինչպէս Սիբիլլան *), այս հարցի լուծումը տալիս է:

—Եթէ այս կենդանու տէրը ընդմիշտ կորած է, ասաց ինձ մի անգամ անցորդը, ես ի սրտէ կըցանկայի որ մեծ սև շունն ևս կորչէր, որովհետև ապագան մեզ համար պիտի լինի ամեն ինչ, իսկ անցեալի այս աստուածացումը ներկայացնում է վատ օրինակ: Նա, կարծես թէ իրանով արտայայտում է, որ հաւատարմութիւնը ինքն իր մէջ պարգևատրւում է:

—Այո, ասաց ինձ մի ուրիշը, ինչպէս ինձ, նոյնպէս և ձեզ մեր մեծ սև շունը թւում է խոր փիլիսոփայ: Նա կարծես թէ, ուզում է մեզ ցոյց տալ որ սիրոյ և բախտաւորութեան ճշմարտութիւնը պարունակւում է միայն նրանց խաբուսիկ ստերում:

Բայց սրանք լոկ խօսքեր են...

Անկաշառելի հաւատարմութեամբ լցած և մեր սրտին անսահման նւիրւած մարդկանց դատարկամիտ խօսքեր:

* *
*

Բուլոնում, ծովի ափին կանգնած է և նայում է հեռուն մեծ սև շունը...

Ց. Նազարեանց

*) Սիբիլլան հին հռովմայեցոց մէջ մի գուշակող կին էր:

Մ Է Ճ Է

(Երաբական աւանդավէպ)

—

Յառաջանանք, յառաջանանք դեռ անապատում և, այրող աւազին վրայ հետևենք վերջի կարաւանի հետքերին։ Ափսո՜ս, երկար ժամանակ մեր աչքերը չըպիտի հետևին այս կիսով չնչաճ հետքերին, որովհետև խորշակը, այն կրակ հովը, հարթել է դաշտերը, ու Մէքքէի ճանապարհորդները թաղել են այդ սոսկալի առանձնութեան մէջ։ Այժմ ամեն վտանգ դաւադրել են, և գիշերը, Արևելքի գեղեցիկ գիշերը, տարածում է իր քողերը երկնքի մէջ, ուր շողում է մի աստղ, որ կըլուսաւորէ աւազեայ լիճը իր ամբիծ լոյսով։

Այս աստղը Մէհէն է, այն թխագոյն աղջիկը, որ միայնակ հեռացաւ հաւատացեալների քաղաքից ճանապարհի վրայ իր կորցրած հօրը գտնելու և նրան օգնութիւն հասցնելու համար։

Խեղճ աղջիկը ինքն էլ ճանապարհը կորցրէց և երեք երկար օրից ի վեր արձագանքները թնդացնում էին իր ձայնը. ամեն ինչ արհամարհեց նա, անգթութիւնը, սաստիկ ծարաւը, երկիւղը։ Միայնակ, առանց սոսկալու անապատի թագաւորից, որի ահեղ մռնչիւնները թրթռում էին իր ականջներում, թափառեցաւ սպասելով... Ալլահը լսել էր անշուշտ իր պաղատանքներն ու աղօթքները, բայց նրանք չընդունեցին։

«Ո՛վ Աստուած, ասաց նա, Աստուած այնքան բարի և այնքան կարող, զարձրու ինձ նրան, որին երբ Հայր տւել էիր ինձ. առ իմ կեանքը՝ նրա կեանքի փոխարէն. բայց մի թողներ որ մի սոսկալի մահ այնքան առաքինութեան և այնքան փառքի վարձքը լինի»: Անօգուտ աղօթքները. նա՝ որի վրայ լալիս էր, մեռաւ է:

Երրորդ գիշերում հովն եկաւ և աւազները աւլած էր Մէճէի շուրջը. և նա կարողացաւ տեսնել իր Հայրիկին և ամբողջ կարաւանին՝ պառկած գետնի վրայ՝ քնանալով յաւիտենական քունը:

Այն ժամանակ Հաւատացեալների Աստուածը գթաց այս անարատ և հեզ արարածի տրտմութեանը վրայ. իր Դրախտից մի հրեշտակ իջաւ Մէճէի հետ խօսելու. «Ինձ հետ եկ, աղջիկ, քո ոդբերը լսեցան վերևը և քո որդիական սէրը պիտի ստանայ իր վարձքը. յաւէտ պիտի միանաս նրա հետ, որի վրայ լալիս էիր...»

Եւ տարաւ նրան՝ ծածկած իր թևերի մէջ, փոխադրեց Երկինք, որտեղից երևում է նա փայլփլող մի աստղի երեւոյթով. և նա կըշողայ այն գիշերներին, երբ խեղճ ճանապարհորդներն անցնելիս լինեն անապատից:

Թարգմ. Ստեփ Շահէնի — Լուիզ Ուլաւօ

Պատճի ձիաւորը

ՆԱՒԹԸ

I



Ձեզանից ով չի լսել Բագու քաղաքի մասին, որը գտնւում է մեր երկրում, Ապշերոնեան թերակղզու վրայ, Կասպից ծովի ափին: Ամբողջ երկրագնդի վրայ նա հռչակաւոր է իր նաւթով: Այստեղ գետնի տակից վեր են խփում քարիւղ, կամ նաւթի բարձր, հսկայական շատրւանները (ֆոնտաններ): Գետնի տակից դուրս վիժած այդ հեղուկ հանքը խողովակներով հոսում է դէպի գործարանները, որտեղ այդ նաւթը մշակւում, մաքրւում և սպիտակ նաւթ (կերոսին) են պատրաստում, որով դիշեր ժամանակ լուսաւորում ենք մեր սենեակները և փողոցները: Այդպիսի գործարաններ շատ կան Բագւում: Նրանց բարձր ծխնելոյզներից վեր են բարձրանում ծխի սև քուլաները: Ձորջը ամեն բան ծածկւած է մուրի հաստ շերտով — տները, մարդիկ, անասունները: Բագւի Հիւսիսային մասը, ուր գտնւում են նաւթի գործարանները, հէնց այդ պատճառով էլ կոչւում է «Սեւ քաղաք»:

Վաղուց չէ, որ մարդիկ հնարել են լամպը, վաղուց չէ, որ Բագւի շրջակայքում սկսել են խփել նաւթի փառահեղ շատրւանները... Բայց այդ քաղաքը դարերից ի վեր միշտ գրաւել է ճանապարհորդների ուշադրութիւնը: Ձատերը այցելում էին այդ քաղաքը՝ զմայլւելու յաւիտենական կրակներով, որոնք բռնկւում էին երկրի տակից և տարածւում դէպի երկինք...

հեռաւոր երկրներից գալիս էին կրակապաշտ ուխտաւորների ամբոխները։ Քաղաքից ոչ հեռու, դէպի արեւելք, Սուրխանի անունով տեղում գտնւում էր նրանց վանքը։ Այժմ մռայլ նայում են նրա սպիտակ աւերակները, բայց վաղուց չէ, որ այդ վանքում կրակապաշտները աղօթում էին իրանց դաժան աստծուն։ Հպարտ կանգնած էր տաճարը ամայի դաշտի մէջին, և նրա պատերի վերին անկիւններից վառւում էին յաւիտենական անհանգչելի կրակները։ Իսկ բակի մէջ տեղը, որտեղ բարձր կաթուղիկէի տակ կանգնած էր սուրբ սեղանը, ամբողջը բռնած էր բոցով։ Գիշեր ժամանակ կրակները լուսաւորում էին մռայլ ու ամայի շրջակայքը, և նրանց լոյսի տակ տաճարի հասարակ շինուածքը կախարդական ամրոցի էր նմանւում։ Հրայինն հոսանքը, որ կամ բաց-դեղին էր լինում, կամ կարմիր, փոխւում էր քամու ընթացքի համաձայն։ Ահեղ փոթորիկների ժամանակ նրանք երբեմն հանգչում, անհետանում էին և մի ակնթարթում նորից բռնկւում — աւելի պայծառ և աւելի փառահեղ։ Եւ ոչ միայն տաճարում, այլ ամբողջ շրջակայ հովտում, բոլոր փոսերից և ճեղքւածքներից այժմ էլ դուրս են գալիս դողդոջուն կրակները. նրանք գալարւում և սողում են գետնի վրայով, կարծես առասպելական օձեր լինեն։ Ոչ ծուխ են տալիս, ոչ մուր. մաքրած ոսկու նման պայծառ՝ բարձրանում են նրանք դէպի երկինք։ Դա գազն է, որ այրւում է, ինքն իրան բարձրանալով գետնից։ Կրակապաշտների ժամանակն անցել է։ Ոչ ոք հիմա այդ անհանգչելի կրակներին չի ընդունում զարհուրելի աստծու տեղ, և մարդիկ այդ գազը հիմա գործադրում են իրանց գործարաններում, իբրև վառելիք։

Աւելի զարմանալի են այն կրակները, որոնք վառւում են ծովի վրայ։ Ջրի վրայ լողում են քարիւղի ամբողջ լճակներ։ Բաւական է նրանց վրայ գցել մի վառւած լուցկի, և մի րոպէում ծովը կվառւի ահագին տարածութեան վրայ։ Դուք շոգենաւով լողում էք հրայինն ովկիանոսի վրայ! Ձեր եռւը վառւած են կրակները և այնքան պիտի այրւին, մինչև որ մի ուժեղ քամի կրհանգցնէ նրանց։ Նաւթը առուներով է վազում դէպի ծովը. այրւում վերջանում են նաւթի լճակները, նրանց տեղ նորերն են գոյանում։

Բագւի շրջակայքը, ամբողջ ապշերոնեան թերակղզին, երկրագնդի վրայ ամենահետաքրքիր անկիւններից մէկն է, մի

ամբողջ նաւթային թագաւորութիւն է։ Նաւթային գոլորշիները բարձրանում են օդի մէջ, և նաւթի հոտը ամեն տեղ զգացւում է, ամեն տեղ աւազը նաւթոտ է, շուրջը ոչ մի բուսականութիւն չի երևում։

II

Նաւթը շատ վաղուց է յայտնի մարդկանց, բայց հին ժամանակներում նրան շատ քիչ էին արդիւնաբերում և գործադրում էին միայն ինչպէս դեղ։ Քառասուն տարի հազիւ կըլինի, որ մարդիկ սկսեցին արդիւնաբերել նրան ահագին քանակութեամբ։ Եօթանասնական թուականներին, Բագւից դէպի հիւսիս-արևելք 12 վերստ վրայ գտնւող թրքական Սաբունչի, Բալախանի և Ռամանի դիւղերի մօտ կային նաւթով լի՝ միայն մի քանի ոչ այնքան խոր հորեր։ Այստեղ չէր լսւում գործարանների սուլոցը, ոչ մի աշխատանք, ոչ մի կենդանութիւն չըկար։ Այդ ժամանակից յետոյ ամեն բան փոխւել է։ Մարդիկ սովորեցին շատ խոր հորեր փորել, երբեմն մի քանի հարիւր սաժէն խորութեամբ, մինչև նաւթի շերտերին հասնելը, և այդ հորերից այժմ նաւթի ահագին շատրւաններ են խփում։ Նախ գետնի երեսին փայտէ բարձր բուրդեր են շինում, որոնց մէջ փորելու և ապա նաւթ հանելու մեքենաներ են սարքում։ Բուրգր, կամ ինչպէս անւանում են՝ վիշկան, շինելուց յետոյ սկսում են մեքենաներով դիշեր-ցերեկ փորել, մինչև որ հասնում են նաւթի շերտերին, որից յետոյ սկսում են մեքենաներով ահագին խորութիւնից նաւթ հանել, եթէ մի-այն նաւթի շատրւան չի գոյանում։ Այս դէպքում նաւթը ահագին ուժով և արագութեամբ բարձրանում է դէպի երկինք, աւելի բարձր՝ քան բուրգը, և թափւելով չորս կողմը՝ ողողում է բուրգը և շրջակայքը։ Երբեմն մի օր ու դիշերում մի հորից դուրս է խփում մի քանի հարիւր հազար փութ հեղուկ, որը մի ակնթարթում լցնում է վազօրօք պատրաստած փոսերն ու աւազանները և գետնի երեսին այնպիսի լճեր են գոյացնում, որոնց վրայ կարելի է նաւակով պտտել։ Նաւթի հետ գետնի տակից դուրս են վիժում աւազ և քարեր, որոնք կուտակւում են հորերի մօտ և բլրակներ կազմում. կամ թէ քամու հոսանքը տանում է քաղաք և թափում կտուրների վրայ։ Սարսափելի է, եթէ այդպիսի շատրւանի մէջ կրակի կայծ ընկնի. ահագին հրդեհ է բռնկւում։ Չրեղէն սիւնը գալարումներով

բարձրանում է դէպի երկինք, քամին խլում է բոցը, մասնիկների բաժանում և շրջակայքը ողողում է հրային անձրևով: Այդպիսի հրդեհը հանգցնելու հնարաւորութիւն չկայ: Նա այնքան է շարունակւում, մինչև որ սաստիկ փոթորիկը հանգցնում է նրան: Բազէի մօտ այնքան շատ է նաւթը, որ մարդիկ առաջ շատ անգամ նոյն իսկ նպատակով վառում էին, որ նոր հորեր փորելու համար տեղեր պատրաստեն: Նաւթային մեծ լիճը մի քանի օր շարունակ այրւում էր: Օտար ճանապարհորդները մինչև այժմ էլ զարմանում են Բազէի ստորերկրեայ հարստութեան ահագին քանակութեան վրայ:

Ասացինք որ նաւթի շատրւանները ահագին ուժով են վեր բարձրանում. և իրաւ՝ նրանք այնպիսի ուժով են խփում, որ մարդը ոչ մի միջոց չունի նրանց կանգնեցնելու: Մի անգամ Բազէի մօտ յանկարծ դուրս ժայթքեց նաւթի այնպիսի ուժեղ հոսանք, որպիսին չէր եղած մինչև այդ ժամանակ: Նա սպառնում էր ծածկել ամբողջ շրջակայքը և աւազով լցնել միւս հորերը: Մարդիկ վախեցած աշխատում էին կանգնեցնել շատրւանը. հորի բերանը ծածկում էին թուջէ (չուգուն) ծանր խուփով, բայց նաւթը թղթի պէս պատառոտում էր թուջը և առաջւայ նման խփում էր վայրենի ուժով: Փորձեցին քարերով լցնել հորը, բայց նրանք դուրս էին թռչում, բարձրանում էին ահագին տարածութեան վրայ, կարծես ստորերկրեայ թընդանօթներից արձակւած ռումբեր լինէին, և գետնին ընկնելու ժամանակ ջարդում էին շինութիւնները, վէրքեր էին հասցնում մարդկանց: Ո՛չ մի միջոց և ոյժ չկար կանգնեցնելու նաւթի ահեղ ժայթքումը: Շատրւանը երկու ամիս խփեց, աստիճանաբար թուլանալով, և միայն այդ ժամանակ աջողւեց ծածկել նրան թուջէ ահագին խուփերով: Շուրջը ամեն բան ծածկւած էր աւազով և ողողւած էր նաւթով: Մերձակայ լճակները դուրս էին եկել իրանց ափերից և հեղեղել դաշտերը... Եւ հարստանալու փոխարէն՝ շատրւանի տէրը մեծ վնասներ կրեց. նա պիտի վճարէր այն բոլոր վնասները, որ պատճառել իր նաւթի ահեղ շատրւանը:

Ջ. Տէր-Գրիգորեան

(Վերջը միւս անգամ)



ԶԻԱՐՃԱԼԻՔ

ԳՐԱԽԱՂԱՑ (ՓՆՏ)

I

ԽՕՍՔԸ ԼՐԱՑՆԵԼ

Խաղացողներից մէկը թաշկինակը գցում է մէւսին, արտասանելով որևէ ածական անուն, որ պիտի լրացնէ այն՝ գոյական յարմար անունով։ Օր. կանաչ՝ զգեստ, աղնիւ՝ բարեկամ, սառը՝ քամի, պայծառ՝ օր, տաք՝ եղանակ, տաք՝ հաց, աղւամազ՝ մորթի, յարդեայ՝ գլխարկ, կատաղած՝ շուն, և այլն։ Յարմար անուն չըգտնողը և չըյարմարացնողը վճարում է ֆանտ։

2

ԽՕՍՔԻ ՎԵՐՔԸ ԳՈՒՇԱԿԵԼ

Խաղացողները կազմում են շրջան։ Նրանցից մէկը վերցնում է թաշկինակը, ծայրը թոյլ կապում է, և գցում է ուրիշին, արտասանելով որևէ բառի սկզբի վանկերը. այդ բառը պիտի լրացնէ այն անձը, որին վիճակւել է թաշկինակը, և ապա, իր հերթին, մի բառի անուն տալով թաշկինակը գցում է երրորդին, և այսպէս շարունակաբար երրորդը՝ չորրորդին, չորրորդը՝ հինգերորդին և այլն։ Օրինակ համար. կառապան, բարա-կացու, ճախա-րակ, նաւա-պետ, նաւա-սարդ, ջեր-

մա-չափ, կանո-նաւոր, կիլա-կի, վաճա-ռական, վարդա-վառ, Հասա-րակ, Հասա-կաւոր, Հասա-նելի, և ուրիշ բառեր:

Ով որ զգալի կերպով կըդանդաղէ, և կամ կ'ասէ անյարմար վերջաւորութիւն՝ նա վճարում է ֆանտը:

3

ՅԱՆԳԱԻՈՐ ԽՕՍՔԵՐ

Խաղը կայանում է արդէն առաջարկուած խօսքին յարմար խօսք սազացնելու մէջ, օրինակ—ծով՝ գով, Հայ՝ լայ, սոխ՝ բոխ, իւղ՝ գիւղ, միս՝ ամիս, երգ՝ վերք, օղ՝ դող, Հող՝ գող, աղ՝ բաղ, խաղ՝ թաղ, տաղ՝ մաղ, գերան՝ բերան, գարի՝ տարի, ուղտ՝ ուխտ, լախտ՝ թախտ, ճարաւ՝ Հարաւ, բառ՝ տառ, դար՝ վար, լար՝ կար, ճառ՝ ծառ, զար՝ սար, պար՝ քար, հընար՝ քնար, և այլն:

Պարզ է որ յանգերը սազացնելու վերաբերմամբ չըպէտք է այնքան խստապանջ լինել:

Գ. Բաբուրեանց

ՀԱՆԵԼԱԻԿՆԵՐ

—

Առաջ. Գ. Բաբուրեանցի.

2ֆ) *Զգւելի եմ, այո՛, ես,*
Երբ, ընթերցող, ինձ տեսնես.
Բայց թող լինեմ երկու մաս,
Այն ժամ շատ բան կիմանաս.
Սկզբի մասը,—երես տառ,—
Քեզ Հաճելի ձայն կըտար,
Որքա՜ն բերկրանք, հիացում,
Մ՛ար սրտումն է նա գոյում.
Իսկ վերջինը՝— օ, Հարւածճ,
Քու դէպ խեղճն ես միշտ լարւածճ:

—

Առաջ. Լորիկի.

26) *Մի բառ գտէք, որ բաղկացած լինի ութ տառից: Այդ բառը գտնելու համար կ'առաջարկեմ հետևեալ պայմանները: Առաջին երեք տառերը ունենայ մի այնպիսի նշանակութիւն, որ մեր աշխարհի գիշեր-ցերեկը զանազանի: Չորրորդ տառը այբուբէնից մի տառ և մնացած տառերի նշանակութիւնը լինի արտայայտութիւն — նկարչի արւեստի:*

—

ԹԻՒԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

—

Առաջ. Տ. Բաբուրեանցի.

27) *Ինչ միջոցով կարող են հինգ մարդ իրանց մէջ բաժանել հինգ հատ ձու, այնպէս որ իւրաքանչիւրը նրանցից ստանար մի-մի ձու, և վերջն էլ մի ձու մնար զամբիւղում, որից պիտի հանէին:*

—

Առաջ, Ցոյնի.

28) 12,345,679 *թիւը, բազմապատկել այնպիսի մի թւանշանով՝ որ արտադրեալը ստացւէր մի տեսակ թւերից, այն է մէկերով: Իմանալ ո՞րն է այդ մի թւանշանը:*

Խմբագիր-հրատարակիչ՝ **ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ**

Типографія К. И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1 – 2.

Дозволено цензурою Тифлисъ, 5 ноября 1898 г.

ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ

ԳԻՆԸ 2 ր. Աղբիւրի և Տարազի բաժանորդների համար 1 ր. 25 կ.

4 գոյնով տպագրուած, 64 թերթիկների վրայ, 101 հետաքրքիր և գեղեցիկ պատկերներ, նկարներ

Գրեց՝ Տոքտոր, Արծուրդ կամ Գարազ.

Լոյս տեսաւ առաձին գրքոյկով

Ս. ԹԱՌԱՑԵԱՆՑԻ

ՀՐԱՑ ՓՈՂՈՎՐԴԻ

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Գինն է 40 կոպ.

Կարելի է ստանալ Տարազի խմբագրատանը և կենդրոնական գրավաճառանոցում, իսկ բագու եղբ. Թառայեանցների գրավաճառանոցում։ 10—3

Աղբիւր-Տարազի գրասենեակում վաճառւում են

	Ր. Կ.
ԱԼԲՈՄ-ԱԼՄԱՆԱԽ 4 գոյնով, ազգ. և այլն 101 պատկեր. 2 ր. փոխ.	1 25
ՍԱՍՈՒՆԻ ԿԵԱՆՔԻՑ—Ծերենցի Երկուցիf IX դարու (սակաւաթիւ) .	2 —
Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ. Հանաստեղծութիւններ 1 ր. 50 կ. փոխարէն . .	1 —
ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ. Հանաստեղծութիւններ 60 կ. փոխ. . .	— 30
ՍԻՒՆԻ. Հնութեան երգեր և հանաստեղծութիւններ 80 կ. փոխ.	— 50
ՍԱՖՕ.	50
Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ճեճապակու վրայ պատկերը (սակաւաթիւ) . . .	10 —
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ պատկերը 6 ր. փոխ.	4 —
ՀԵՐԿԱՆՔ, խրօմօ-ակւարել, ՌԱՖԱՅԷԼԻ Մադօնաներ, հրեշտակներ, ՐՈՒԲԻՆՅԻ Յիսուս և Տիրամայր, ՁԼՔՍՊԻՐԻ Քօմէօ-Ջուլիէթ թափանցիկ լուսի դէմ նկար, ընդամենը 8 պատկեր. 2 ր. փոխարէն .	— 60
ՄԻՔԱՅԷԼ ՆԱՀԱՆԴԵԱՆՑԻ մեծադիր ֆօտօ-գրաւիւր պատկերը .	1 20
ՀԱՐՒՄԻ ԱՂՋԻԿԸ ոսկէ շղթաներում	— 50
ՄԱՅՐԻԿԻ ՆՆՋԱՐԱՆՈՒՄ խրօմօ	1 50
ՁՄԵՌ	— 20
ԱՐՏԱՁԱՅՍ Բ. թագաւորի մուտքը ի Հռոմ.	— 30

ԲԱՓԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

—

Աղբիւր *ամսագրի և* Տարազ *շաբաթաթերթի առաջիկայ* 1894 *թուականի բաժանորդագրութիւնը կըբացվի նոյեմբերի* 15-*ից։*

Ներկայ 93 *թ. մենք յատուկ ուշադրութիւն դարձրինք* Տարազի *վրայ,* Աղբիւրի *մասին աւելի ընդարձակ մեր ծրագրի իրագործելը թողնելով առաջիկայ տարւան։ Ոչ մի խոստում մենք չենք անում խոտապահանջ ընթերցողին։ Թողնում ենք, որ հայն ինքը շօշափէ այն առաջադիմութիւնը, որ* Աղբիւր-Տարազ *օր-օրի վրայ կունենան։*

Մի բան միայն խնդրում ենք հայ ընթերցողին, որ նա իմանայ. Աղբիւր-Տարազը *հրատարակւում են միմիայն բաժանորդներից և յայտարարութիւններից ստացած դրամով։* Աղբիւր-Տարազը *կողմնակի ոչ մի եկամուտ չունեն, դէֆիցիտը տարէցտարի բարդւում է ճանր* $^0/_0$*-ի հետ և կազմում խոշոր պարտք խմբագրութեան, խլում է մեր ոյժերի մեծ մասը և ստիպում է մեզ աշխատել մեր ոյժերից շատ վեր, կորցնելով սեպհական միջոցներ և առողջութիւն։ Մենք խնդրում ենք, որ հայ ընթերցողը այս հանգամանքը միշտ ի նկատի ունենայ և իր ստացած թերթերի բաժանորդագնի ջրվճարելը շահ չըհամարէ իր գրպանին։ Մենք սովորութիւն չունենք մեր բաժանորդներին յիշեցնել, որ ստացող թերթի որոշած գինը պէտք է վճարել. ընթերցողն ինքը պէտք է խմբագրութեան բիւր գրկանքներին չաւելացնէ և բաժանորդագին ջրվճարելու տգեղ վարմունքը։*

—

Բացւած է 1899 թ. բաժանորդագրութիւնը

XVII ԱՂԲԻՒՐ XVII

Միամսեայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար,

կրթուասարակի նոյն ուղղութեամբ եւ ազնաւակիցների մասնակցութեամբ։

Աղբիւրը պրէմիան է ԱՆՏԻՓՈՆԱ եւ ՔՊՔՈՒՈՒ, հին Յունաստանի առասպելներից խրոմօ-օլէօգրաֆիական շքեղ պատկեր.

ԴՈՒՇՏԱՆ. Աղբիւրի նպատակն է գործեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վեհն ու ազնիւը և առելութիւն դէպի չարն ու վատթարը։ Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է դրութեան, որ քաջամարտելով, անվեհեր թեան սերմեր։

ԾՐԱԳԻՐ Ն. Բանական բաժին. Մանրապատում, Զրոյց, Ն-քեալ, Ճանապարհորդութիւն, պեղումներ, հանասարեցնող... Թիւրեն։ Գիտութիւն և արուեստ. Նոր լուրեր։ Մայ և այլ բաներ։ Պատկեր։ Վանական, Փրէօքիեն, շախմատի և այլ բաներ։ Նամակներ, Թ. ազնական խնդիրներ։ Անեկդոտ. Հանելուկ, Բեմբ բաներ։

Բ. բաժին. կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ նիւթեր։ Ուսումնական ձեռնարկներ։ Մանկավարժական հարցեր և պատասխաններ։ Մանկավարժական լուրեր։ Մանկավարժական գրականութիւն։ Մանկավարժական գրքերի վերլուծութիւն։ Մանկավարժական գրքերի վերլուծութիւն։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան բաժանորդագինը 3 ր. արտասահման 5 ր. (15 ֆր.)

Պրէմիայով 4 ր.

Խնդրում ենք Աղբիւր-Տարազին բաժանորդ գրել ցանկացողները աճապարեն փութով ստորագրել, որպէս զի այս անցնող 1898 թւականի նման նոր բաժանորդ գրուողները չզրկւեն Աղբիւր-Տարազի առաջին №№-ից։

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. „Агбюръ Tiflis. Coucase. Réd. du jour. «Agboür

№ 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1898

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ № 11

Ա. բաժին

Ահա ինչպէս պէտք է խաղալ (*պատկեր*). *** (*բանաստեղծ.*) Ռ. Ա.։ Եթովպական երկու փոքրիկ զոյց. Նիկ. Դաւթեանց։ Փշակը եւ աղաւնիք (*գերմաներէնից*). Ֆ. Յ. Գալայեան։ Առուն-Հառուն. *Յար.* Թումանեանց։ Ալեւոր խնձորենին (*բանաստ.*) Ջ. Հալուդեան. Նաւապետ Բոպպ. *Թարգմ. օր.* Մ. Զահուկեանց։ Աշխարհից ճեռացած (*պատկ.*)։ Հայրենասէր Իճիգէնիա (*վերջ*). Ա. Հարութիւնեան։ Ծիծեռնակներ (*Ներանձիկից*) Դեր. Թեմիրճեան։ Նաւթը (*վերջ*). Ջ. Տէր-Գրիգորեան։ Նաւթի վիճակներ (*պատկեր*)։ Գութենբերգ Ն. Ա. Տէր-Աւետիքեան։ Մանե եմ գալիս... (*բանաստ.*) Յովհ. Կոստանեանց։ Խոզանոցում (*պատկեր*)։

Զ ա ր ճ ա լ ի ք

Գրաւախաղ (*ֆանտ*) — Գ. Բաբուրեանց. Հանելուկներ։

Բ. բ ա ժ ի ն

Մեր ընթերցողներին։ Ընտանիք թէ դպրոց. Ի. Ս. Թ.։ Ընտանիքը որպէս կրթ. հիմնարկութիւն (*կըշարունակուի*). Փոխադր. Ի. Յովհաննէսեանեան։ Մատենախօսութիւն. «Խորամանկ աղուէսը», Ս. Թ.։

Երաժշտ. ազդեցութիւնը կենդանիների վրայ. Ի. Պ.։ Գրքեր դաստիարակների եւ ծնողների համար։ Դաստիարակչ. նորութիւններ։

Այլ եւ այլ

Որքան է արժենում մի երեխայի դաստիարակութիւնը։ Տնային էկեքտր. փոստարկղ։ Դաշնամուր հիւանդների համար։ Թանկագին համբոյր։

«Աղբիւրի» պատասխաններ

ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ մինչեւոյն հաստէքով և պրէմիաներ ստացող բաժանորդը փոխանակ 11 ր. վճարում է միայն 10 ր., բացի այդ ձրի ստանում է **ՏԱՐԱԶԻ** դեղանի փառակազմ **ՕՐԱՑՈՑՑ** 1899 թ., եթէ բաժանորդ է գրւել մինչև դեկտեմբերի 15-ը։

Նոր բաժանորդները Տարազ և Աղբիւր կըստանան դեկտեմբերի 1-ից։ Աղբիւր և Տարազ միևնոյն հաստէքով բաժանորդը, եթէ ստորագրւել է մինչև առաջիկայ դեկտեմբերի 15 ր, կըստանայ եւ նեսեւեալ պրեմիաները աւելացնելով բաժանորդագնին ՄԻՈՑՆ 2 ր. 1) **ԱՂԲԻՒՐԻ ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ** վեց շէջ գրոյկներ, որոնք իրանց ներքին եւ արտաքին փայլով կարող են լինել ամենաթանկագին ընծայ նոր տարու համար։

ՏԱՐԱԶԻ ՕՐԱՑՈՑՑ—գեղանի փառակազմ հրատարակութիւն, սալոնների համար։

Ահա թե ինչպես պետք է խաղալ